ԼՈՒԻԶԱ ՀՈՒՍԻԿՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՋՈՆ ԱՊԴԱՅՔԻ «ԱՂԱՎՆՈՒ ՓԵՏՈՒՐՆԵՐ» ԵՎ «ՃԱԳԱՐ, ՎԱԶԻՐ» ԵՐԿԵՐՈՒՄ

Մարդն իր ծնված օրից մինչև մահ փորձում է գտնել հետևյալ հարցերի պատասխանը. ինչպե՞ս է ստեղծվել երկինքն ու երկիրը, մարդը, որտեղից է նա եկել և ո՞ւր է գնում: Ըստ Աստվածաշնչի, մարդն Աստծո արարչագործություններից ամենակատարյալն է, որին Աստված առանձնացրեց բոլոր կենդանի էակներից՝ նրան տալով բանականություն և իշխելու զորություն:

Այսօր մարդու բանականությունը հնարավորություն է տալիս նրան մրցելու բնության հետ, պատմությունը ցույց է տվել, որ նա փորձում է մրցել նաև Աստծո հետ (Բաբելոնի աշտարակի պատմությունը): Սակայն կան մարդիկ, ովքեր աստվածային ոգեշնչմամբ արարում են այն, ինչ մարդուն հիշեցնում է իր սկզբնական առաքելությունը, ի ցույց դնում իր իրական դեմքը:

Հիշենք Դանթեի «Աստվածային կատակերգությունը», որը հոգու մաքրության ուղու վրա լույսի շող է սփռում, Շեքսպիրի ողբերգությունները, որոնք որպես հայելի ցույց են տալիս մարդու հոգու ամենամթին անկյունները, ինչպես նաև Ջոն Ապդայքին, ով իր ուրույն ձևն է գտել պարզաբանելու մարդու գոյության հիմնահարցերը: Ապդայքն ընթերցողին գրավում է՝ արդի փիլիսոփայական խնդիրների մասին իր խորունկ և լուրջ մտորումներով:

Ապդայքը գրում է ժամանակակից կյանքի, հասարակության մասին, ընդ որում նրա ստեղծագործություններում նշմարելի են կրոնական մոտեցումներ կյանքի խնդրահարույց երևույթների հանդեպ: Միևնույն ժամանակ շատ քննադատներ կասկածի տակ են դնում գրողի իրական հավատքի բնույթը:

Քենեթ և էլիս Համիլթոնները իրենց «Ջոն Ապդայքի տարրերը»[1] խոշոր ուսումնասիրության մեջ նրա գաղափարները դիտարկում են իբրև պատմական քրիստոնեություն: Մյուսները մեկնաբանում են նրա կրոնական կենտրոնը թեիստական էկզիստենցիալիզմի ներքո:

Մեզ համար, այնուամենայնիվ, անկասկած է այն փաստը, որ Ապդայքի գրեթե բոլոր ստեղծագործությունները ներթափանցված են հավատքի անվերջ

[1] Alice, Hamilton and Kenneth, Hamilton: The Elements of John Updike.Eerdmans, Grand Rapids, Mich, 1970.

որոնումներով: Գրողի ստեղծագործական աշխարհն ընկալելու համարպարզապես անհնարին է անտեսել նրա աստվածաբանական աշխարհայացքը: Ստորև կփորձենք արծարծել մեր տեսանկյունը «Աղավնու փետուրներ» և «Ճագա'ր, վազի'ր» ստեղծագործությունների վերլուծության հիման վրա:

Ապդայքի հերոսները կենդանի են, իրական, ունեն իրենց ուրույն վարքագիծը: Ինչպես այլ ամերիկյան վիպասանների համար, Ապդայքի համար նույնպես օտարացած անհատը պատկերման գլխավոր առարկան է, իսկ վեպը պատմում է ողբերգականորեն միայնակ մարդու մասին, որը փնտրում է իրեն և իր տեղը մարդկանց մեջ:

Ամերիկյան վեպը յուրօրինակ երևույթ է: Նրա տեսակարար կշիռը Ամերիկայի գրականության մեջ մեծ է, քանի որ այն մի երկրում էր, որն իր առաջացման ժամանակ չուներ ո'չ պատմական, ո'չ էլ ժողովրդական ավանդույթներ: Վեպը խաղում է նաև էպոսի դեր, ինչը չէր կարող չանդրադառնալ նրա ժանրային առանձնահատկության, անձի խնդրի լուծման բնույթի վրա: Ամերիկյան վեպը (շնորհիվ իր մեջ արտացոլված իր երկրի պատմության առանձնահատկությանը), ունի ինքնատիպ անկրկնելիություն՝ նրան բնորոշ է իր սեփական զարգացման ուղին: Համեմատած այլ վեպերի հետ, ամերիկյանը ավելի քիչ է հագեցած հասարակության մեխանիզմների վերլուծությամբ և շատ կենտրոնացած է առանձին վերցրած անձի ու շրջապատող աշխարհի նկատմամբ նրա մտաարտացոլման վրա:

Գրականության միջոցով ընթերցողի հետ գրողը կիսում է իր մտքերն ու տեսլիքը: Հեղինակի գործը չի ավարտվում միայն ստեղծագործությունը գրելով: Այն լիարժեք չէ, քանի դեռ ընթերցողը չի կարդացել այն և չի արձագանքել:

Ստեղծագործության ընկալման հարցում թերևս կարևոր է հաշվի առնել գրողի ապրած ժամանակաշրջանը, նրա անձնական կյանքն ու վերապրումները: Ինչպես նշել է Գյոթեն. «Յուրաքանչյուր գրող ակնհայտության աստիճանի արտահայտում է իր ստեղծագործություններում ինքն իրեն, հաճախ իր կամքին հակառակ»[2]:

Այս մոտեցումը հնարավոր է կիրառել նաև Զոն Ապդայքի ստեղծագործությունների վերլուծության համատեքստում: Նրա ստեղծագործություններում նեղանում են ժամանակի և տարածության սահմանները, նեղանում է հերոսների շրջանակը, և ուշադրությունը կենտրոնանում է անահատականի վրա: Ժամանակաշրջանը ներկայանում է ընթերցողին հերոսի միջոցով /Օրինակ՝ «Ճագար, վազիր» վեպում/: Որոշ բացառություններով, նրա գրեթե բոլոր արձակ ստեղ-

---

[2] Н.С.Валгина: "Теория текста, учебное пособие", Логос, Москва, 2003.

ծագործությունները հիմնված են ինքնակենսագրական մոտիվների վրա և Շելլինգթոնը՝ նրա ծննդավայրը, բազմաթիվ անգամ հայտնվում է նրա արձակում:

Ստեղծագործության ընկալման հաջորդ փուլը սկսվում է ընթերցման ընթացքում ընթերցողի երևակայության մեջ: Ընթերցողը ստեղծում և տեսնում է կերպարներ՝ հետևելով իր երևակայությանը: Հաճախ ընթերցողի ստեղծած կերպարները կարող են հակադրվել հեղինակի կանխատեսած կերպարին: Ընթերցման և ընթերցողի ընկալման գործընթացը շատ անհատական է: Ընթերցողի ընկալման գործընթացը նույնպես զուգակցվում է ընթերցողի աշխարհընկալման, դատողության և ինչու չէ նաև ապրած կյանքի հետ: Շատ հաճախ ընթերցողը գտնում է այն, ինչ ուզում է տեսնել, կամ ինչի կարիք որ նա ունի այդ պահին: Այդ իսկ պատճառով միևնույն ստեղծագործությունը, կամ նույնիսկ ֆիլմը տարբեր կերպ կարող են մեկնաբանվել տարբեր մարդկանց կողմից:

Անդրադառնալով Ջոն Ապդայքին՝ կարող ենք ասել, որ նա ոչ թե պարզապես գրող է, ով կարողանում է ստեղծել հրաշալի բառախաղեր և տեսարանների նկարագրություններ, այլ նա մեկն է, ով ի զորու է ուսումնասիրել մարդկային հոգեբանությունը, ուսումնասիրել հասարակ մարդու առօրյան ու կյանքը՝ նրա միջոցով ներկայացնելով հասարակության արդի խնդիրները: Նրան՝ իբրև քննադատական գրողի, տրված է նկատել և տեսնել այն խնդիրները, որոնք թաքնված են ամերիկյան «ապահովված» հասարակության աչքից:

Այսպես, Ապդայքի «Աղավնու փետուրներ» պատմվածքի թեման մահվան և հավերժության, ավարտի և շարունակականության էությունն ու հակադրությունն է:

Ըստ գործողության, ստեղծագործությունը բաղկացած է երկու հատվածից: Առաջին հատվածում հեղինակը բարձրացնում է հիմնական թեման՝ ներկայացնելով այն տասնչորսամյա Դեյվիդի միջոցով: Այստեղ ներկայացվում է, թե ինչպես է ավիրվում Դեյվիդի անսասան աշխարհը, երբ նրա ընտանիքը քաղաքից տեղափոխվում է ֆերմա: Ընկնելով միայնության և ծանծրույթի մեջ՝ նա սկսում է ուսումնասիրել հոր գրադարանի գրքերը, և այդ ժամանակ նա տեսնում է իր մահացած պապիկի Աստվածաշունչը: Դեյվիդի մոտ առաջանում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են. «Պահպանվու՞մ է արդյոք մարդու գիտակցությունը մահվան և հարություն առնելու օրերի միջև: Կա՞ արդյոք դրախտ, թե՝ ոչ: Եթե ոչ, ապա որտե՞ղ է լինում հոգին այդ ժամանակ»:[3] Նա առաջին անգամ

[3] Updike, John: Pigeon Feathers and Other Stories. Alfred A. Knopf, New York, 1962. P 132.

զգում և գիտակցում է մահվան սարսափը. «Առանց զգուշացման Դեյվիդին այցելության եկավ մահվան մի հստակ տեսիլք. Երկար մի փոս հողի մեջ, ոչ ավելի լայն, քան մարմինդ է, և քեզ գցել են հողի մեջ, իսկ գլխիդ վերևում սպիտակ դեմքեր են: Դու փորձում ես հասնել նրանց, բայց քո ձեռքերն ամրացված են գեղասեղներով: Քո դեմքին բահերով ցեխ են լցնում: Այնտեղ դու առհավետ, այդ նույն դիրքով կլինես կույր և համր, և որոշ ժամանակ անց քո մասին բոլորը կմոռանան, և ոչ ոք քեզ չի կանչի»[4]:

Դեյվիդի միջոցով Ապդայքը բարձրացնում է ժամանակավոր և հավերժ կյանքի գոյության հարցը և դրա անհրաժեշտությունը: Այստեղ Ապդայքը առաջ է քաշում ֆիզիկական կյանքի ու աշխարհի ժամանակավոր լինելու փաստը: Այն անցողիկ է և վերջանում է մարդու մահով: Իսկ դրանից հետո պարզապես անհրաժեշտ է այլ կյանքի՝ հարատև կյանքի գոյությունը, այլապես հենց այստեղ ամեն բան դառնում է դատարկ և ունայն, ինչպես նշվում է «Ժողովող» գրքում:

Դեյվիդը գիտեր միայն մեկ բան. «Նա չի շեղվի ճշմարտությունից. ես եմ ճանապարհը, ես եմ ճշմարտությունը»[5]:

Կարելի է ասել, որ այստեղ է վերջանում պատմվածքի առաջին մասը և անմիջապես հետո սկսվում է երկրորդը, երբ տատիկը խնդրում է Դեյվիդին սպանել ցախատան աղավնիներին: Դեյվիդի համար սա տարօրինակ և տհաճ հանձնարարություն էր: Նա չէր ցանկանում սպանել թռչուններին: Առավել անհեթեթ էր պատճառը, ըստ որի թռչունները վնասում էին հին օլինջերյան կահույքը, որը նրանք երբեք չէին օգտագործելու, ինչպես նշեց Դեյվիդի մայրը:

Այստեղ Դեյվիդի հոր կյանքի առաջաբանի միջոցով հեղինակը մեզ է ներկայացնում աշխարհի սկզբունքը "Kill or be killed"[6], սպանի՛ր, կամ եղի՛ր սպանված: Այստեղ հանդիպում ենք աշխարհում տիրող անհանդուրժողականությանը, ատելությանն ու բռնությանը: Ասես մի պահ Դեյվիդը դադարում է մտածել մահվան և հավերժության մասին, նա պետք է կատարեր առաջադրանքը: Ապդայքը նկարչի վարպետությամբ նկարագրում է գեղեցիկ թռչուններին, երկնագույնի ու վարդագույնի, սադափագույնի ու սպիտակի գունախաղերը, պատկերում ցախատան պատերի ճեղքերից ներս թափանցող լույսի շողերը, որոնք ճեղքում էին խավարը, որ տիրում էր ցախատանը:

---

[4] Նույն տեղում, p.123.
[5] Նույն տեղում, p. 138.
[6] Նույն տեղում, p. 143.

Դեյվիդն անում է այն, ինչ հանձնարարված էր նրան: Սկզբնական անհաստատությունը, վախն ու ներքին դողը փոխարինվում են գործողությունների հստակությամբ, և նա նշան բռնելով՝ սպանում է անմեղ թռչուններին:

Գործն արված էր: Այլևս չէին լսվում թռչունների երգեմնի ծլվլոցը, որին այնքան ուշադրությամբ ու հետաքրքրությամբ ունկնդրում էր Դեյվիդը: Այժմ նա շրջապատված իր «զոհերով»՝ մենակ էր կատարյալ լռության մեջ: Դեյվիդին սթափեցնում է մոր արած կտրուկ արտահայտությունը. «Քո զոհն է, դու էլ թաղիր»[7]: Արտահայտություն, որն այնքան հաճախ կարելի է լսել հասարակության կողմից. «Դու ես արել, դու էլ պատասխան տուր»: Որքան հաճախ է պատահում, որ անձն անում է այն, ինչ պահանջում է իրենից հասարակությունը, անկախ նրա կամքից: Իսկ արդյունքի համար պատասխանատու է լինում միայն անձը: Հասարակությունն այլևս նրա կողքին չէ, այլ՝ հեռվում, օտարացած, երբեմն էլ նույնիսկ նրա դեմ և քննադատող:

Բարձրացնելով գետնին ընկած աղավնու անշնչացած փոքրիկ մարմինը՝ Դեյվիդը նկատում է նրա կատարյալ կառուցվածքը, փետուրների գույնը, նրբությունն ու ճշգրիտ դասավորությունը: Դեյվիդին գրավում է այն միտքը, թե որքան կատարյալ և մանրակրկիտ հստակությամբ է Արարիչը ստեղծել այդ թռչուններին: Սա արտահայտված է ստեղծագործության վերջին արտահայտության մեջ, որն էլ վերադարձնում է մեզ թեմայի նույն հարցին. «Աստվա՛ծ, որն այսքան ջանք է թափել այս անարժեք թռչունների վրա, չի ոչնչացնի Իր ողջ արարչագործությունը՝ մերժելով Դեյվիդին ապրել հավերժ»:[8]

Կյանքի անիմաստության գիտակցումը ամերիկյան գրողներից շատերին ի վերջո հանգեցնում է այն մտքին, որ մարդն ազատ է իր գործողություններում, բայց պարտավոր է հատուցել իր կատարած սխալների համար: Անհատը ներգրավված է պատմական առաջընթացի մեջ և պատասխանատու է ոչ միայն իր, այլև մարդկության առջև: Նրանք գիտակցում են, որ աբսուրդը մարդու և աշխարհի միջև չէ, այն ծնվում է անհատի և նրա անորոշ կեցության բախումից: Դրանից գրողներն արտածում են անհատի ընդվզումը, նրա ազատաբաղձությունը: Հերոսները չեն հասնում իրենց նպատակին, ինչ-որ բան նրանց խանգարում է, նրանք չեն հարմարվում իրենց իրավիճակին, դուրս են գալիս իրենց շրջապատող իրականության դեմ:

Ապդայքի «Ճագար, վազի՛ր» վեպի հերոսը նույնպես ազատաբաղձ է՝ չհարմարվելով իր կյանքին, իրեն ներգրավված չզգալով ոչ հասուն կյանքի մեջ,

---

[7] Նույն տեղում, p. 149.
[8] Նույն տեղում, p. 150.

ոչ էլ անցած մանկության: Պատահական չէ, որ վեպը սկսվում է բասկետբոլ խաղալու տեսարանով: Տղաներն ինքնամոռաց խաղում են, իսկ աշխատանքից վերադարձող Հարրին կանգ է առնում, հմայված նայում է և ի վերջո որոշում մտնել խաղադաշտ: Սկզբում տղաները զարմացած նայում են Հարրիի հաջողված խաղը (չէ՞ որ Հարրին չեմպիոն է եղել դպրոցում), իսկ այնուհետև տղաները մեկը մյուսի հետևից հեռանում են խաղահրապարակից: Հարրի էնգսթրոմն այլևս չի տեղավորվում այս տեսարանում: Չէ՞ որ չես կարող փախչել ու վերադառնալ մանկություն: Քեզ այնտեղ ոչ ոք չի սպասում: Նրանից պետք է պարզապես վերցնել այն ամենը, ինչ կարող ես: Վերցնես և հասցնես քեզ հետ հասուն կյանք, թեկուզ չկայացած, բայց միակը, որտեղ կարևոր է այն, ինչը չկա մանկությանդ մեջ՝ պատասխանատվության զգացումը:

Քսանվեցամյա Հարրի էնգսթրոմը, որին դեռևս մանուկ հասակից կոչել էին ճագար, փախչում է մեծ քաղաքի մահացու հեղձուցիչ օդից, ծանձրացնող աշխատանքից, ընտանեկան կյանքի միօրինակությունից՝ չգիտակցելով անգամ, որ փախուստը դառնում է իր ապրելակերպը:

Փախչելուն, վազելուն ճագարը սովոր էր դեռ պատանեկության շրջանից, երբ բասկետբոլ էր խաղում: Մարզիչի խոսքերով. «Վազե՛լ, վազե՛լ, վազե՛լ: Քանի դեռ նրանք ոտքերով կանգնած են գետնին, պետք է անընդհատ վազեն»[9]:

Ինչպես երևում է նրա մականունից, ճագարը գիշատիչներից չէ, բայց նրա խղճին ծանրացած է արդեն մարդկային մի զոհ: Նա փորձում է արդարացնել իրեն իր երեք շաբաթական դստեր գերեզմանի մոտ, վախկոտ մարդուն բնորոշ համառությամբ պնդելով, թե ինքը չի սպանել իր դստերը, և ամեն ինչում մեղավոր է կինը: Նա նայում է կնոջն ու մտածում, թե ինչպես վշտից չմեռավ, ինչպես է համարձակվում շարժվել, քայլել: Այստեղ անխուսափելիորեն հիշում ես Ուլիամ Քենեդիի «Երկաթե մոլախոտ» վեպի հերոս Ֆրենսիս Սելանին, որը, ի հակադրություն Ապդայքի հերոսի, իր որդու շիրիմի մոտ չի խուսափում պատասխանատվությունից և խոստովանում է, որ ամենևին չէր ցանկանում սպանել որդուն, և որ այն պատահական էր տեղի ունեցել:

Չէ՞ որ «ճագարն» էլ է բարի, սակայն յուրովի: Նա ոչ ոքի չարիք չի ցանկանում, նա իրեն շրջապատող մարդկանցից ավելի անկեղծ է ու ազնիվ: Նա դժգոհ է կյանքից, որը նրան թվում է ոչ իրական, աստվածային կայծից զուրկ: Բայց նա ի վիճակի չէ մտածել իր դրության մասին, իր ներկայի ու ապագայի մասին և բարությամբ վերաբերվել նրանց, ում երջանկությունը կախված է իրենից:

---

[9] Updike, John: "The Poorhouse Fair; Rabbit, Run", New York, The Modern Library, 1965, p.205.

Առաջին հայացքից նրա բարեկեցիկ ընտանիքը աչքի է ընկնում իր անբովանդակությամբ, հոգևոր լույսի ու ջերմության լիակատար բացակայությամբ: Ճագարը որոշակիորեն զգում է դա: Նրա մութ գիտակցության մեջ՝ դեռահասի գիտակցության, որը մեծանալով այդպես էլ չափահաս չդարձավ, պտտվում են անորոշ, աղոտ մտքեր՝ մի ուրիշ իրական, աստվածային կյանքի մասին: Նրան վախեցնում է գոյության անհոգությունը: Նրան թվում է, թե նա ընկել է մի անտեսանելի ծուղակի մեջ, և նրան մնում է միայն դուրս պրծնել, փախչել ու փրկվել: Փախչելով ընտանիքից, աշխատանքից, մարդկանցից, պատասխանատվության ու մեղքի զգացումից, որոնք երկու ստվերների նման հետևում էին իրեն: Նրան դրդում է ոչ թե բանականությունը, այլ խուլ, մութ բնազդը՝ փոքրիկ կենդանու բնազդը, որը փորձում է դուրս պրծնել ծուղակից և փրկվել հետապնդումից: Պատահական չէ, որ Ճագարի մականունը, որը նա ստացել է սպորտային մարզադաշտում, դառնում է այս անօգնական ու թշվառ էակի, որին ամբողջ աշխարհը հսկայական մի ծուղակ է թվում, ծածուկ հատկությունների արտահայտումը:

Ջոն Ապդայքի ստեղծագործությունները բազմազան են իրենց ինչպես ժանրային կառուցվածքով, այնպես էլ թեմատիկ առանձնահատկությամբ: Սակայն նրա բոլոր գործերի հիմքում ընկած է մարդու պատասխանատվության հիմնախնդիրը, որը չի կորցրել իր արդիականությունը ցայսօր, ինչպես ամերիկյան, այնպես էլ հայաստանյան իրականության մեջ: Ընդ որում պատասխանատվության խնդիրը ընկալվում է գրողի կողմից՝ ինչպես կրոնական, այնպես էլ հասարակական և անհատական իմաստներով: